Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ջուջևանի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-ֆինանսիստի (ծածկ. 3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

05.06.2015

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Ջուջևանի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ջուջևան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Ջուջևանի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջատար մասնագետ-ֆինանսիստի թափուր պաշտոն զբաղեցնելու համար:
Աշխատակազմի առաջատար մասնագետ-ֆինանսիստը /ծածկ. 3.1-1/՝
1/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ժամանակին և պատշաճ որակով,
2/ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
3/աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է ֆինանսական փաստաթղթեր,
4/ ստորագրում է իր կողմից պատրաստված փաստաթղթերը,
5/ իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետն ունի որենքով ,իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
1/ միջնակարգ կրթություն,
2/ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <Համայնքային ծառայության մասին>, <Տեղական ինքնակառավարման մասին>, <Գույքահարկի մասին>, <Հողի հարկի մասին>,<Հանրային ծառայության մասին>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորություններիհետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
3/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
4/ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1/գրավոր դիմում(տրվում է հանձնաժողովի անունով),

2/համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
3/հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
4/հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
5/<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի <ե> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
6/ երկու լուսանկար /3x4չափսի/,
7/ անձնագրի պատճենը,
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերը ընդունվում են Ջուջևանի գյուղապետարանում և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, ամեն օր ժամը10-ից մինչև 17-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:
Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում: Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ջուջևանի գյուղապետարանի աշխատակազմ/գ. Ջուջևան,, հեռ. 026663126/ կամ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն:
Մրցույթը կկայանա 2015թ-ի հուլիսի 7-ին, Ջուջևանի գյուղապետարանի շենքում, ժամը 12-ին:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թ-ի հունիսի 20-ը:
Հասցեն Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Գ. Ջուջևան, Ռուբեն Սևակի 19
Հեռ. 0266 63126
էլ. փոստ՝ jujevan.tavush@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան, Ռուբեն Սևակի19

Հեռ..՝ +374 266 6312